

- **Քսենոփանես Կոլոփոնցի** (Xenophanes of Colophon, յուն.՝ Xenophánês 570 – 475 մ.թ.ա.)

Ծնած է Կոլոփոն (Յոնիա, Փոքր Ասիոյ արեւմտեան ծովափին, Եփեսոս քաղաքէն՝ հիւսիս): Քսենոփանէս 25 տարեկան էր, երբ կը վտարուի իր ծննդավայրէն, այնուհետեւ ան թափառաշրջիկի կեանք կը վարէ ու կը դառնայ շրջուն բանաստեղծ ու երգիչ: Իր կեանքի վերջին տարիներուն կը հաստատուի հարաւային Իտալիոյ յունական մասին, Էլեա (Elea) քաղաքը, ուր եւ կը հիմնէ իր դպրոցը:

Քսենոփանէս նշանաւոր կը դառնայ քերթուածի ձեւով գրուած քննադատական իր փիլիսոփայութեամբ, կասկածապաշտական (սկեպտիկ) դիրքաւորումներով եւ բանաստեղծական եղերերգութիւններով (Elegy), որոնք անպայման ողբի հառաչանքներ չէին:

Քսենոփանէս, իր հեգնական գրութիւններով կը պայքարէր իր ժամանակուան աստուածներուն դէմ, որոնց մասին գրած էին բանաստեղծներ՝ Հոմերոսն (յուն.՝ Hómēros, մօտ. մ.թ.ա. 9-րդ դար) ու Հեսիոդոսը (յուն.՝ Hēsíodos, մօտ. մ.թ.ա. 8-րդ դար): Քսենոփանէսի համաձայն, մարդիկ չեն ստեղծուած աստուածներու կողմէ, այլ իրենք ստեղծած են աստուածները եւ անոնց տուած մարդկային լաւ, բայց նաեւ բարոյական վատ յատկանիշներ, ինչպէս՝ նախանձ, խաբեբայութիւն, անհանդուրժողութիւն, ամուսնական անհաւատարմութիւն, եւայլն...: Քսենոփանէս, իր գլխաւոր երկին (յուն.՝ „Peri phýseôs” = «Բնութեան մասին») մէջ, ընդհանրապէս կը մերժէր աստուածներու մարդակերպութիւնը (Anthropomorphism) եւ փոխան բազմաթիւ աստուածներու ան կը ներկայացնէ միակ, գերագոյն, կատարեալ ու հոգեղէն աստուած մը, որ անշարժ ու յաւիտենական է եւ մարմնապէս ու հոգեպէս նման չէ մարդոց:

- **Պարմենիդէս Էլեացի** (Parmenides of Elea, յուն.՝ Parmenídês 520 – 460 մ.թ.ա.)

կը նկատուի բնագանցութեան (Metaphysics) նախահայրը: Միակ գրքոյկը (յուն.՝ „Peri phýseôs” = «Բնութեան մասին»), որմէ մեզի հաստուածներ միայն հասած են, գրուած է քերթուածի ձեւով: Պարմենիդէս պատկերացումներ ունէր՝ գոյութեան եւ գոյի մասին, որ «անսկիզբ, անվախճան, ամբողջական, անշարժ, անժամանակ ու շարունակական» է: Պարմենիդէսի փիլիսոփայութեան հիմունքը կը նկատուի իր նշանաւոր խօսքը.- «Գոյը (յուն.՝ *ta eonta*)՝ Է. ոչ-գոյը (յուն.՝ *mê eonta*)՝ չէ»: Գոյը, որ Է, արդէն կատարուած, աւարտած ու ներկայ է եւ երբեք չի փոխուիր: Պարմենիդէսի համաձայն, մարդիկ, որոնք գոյի փոփոխութեան մասին կը խօսին, պարզապէս իրենց կարծիքը (յուն.՝ *dóxa*) կը յայտնեն:

Պարմենիդէս աշխարհը կը պատկերացնէր, որպէս՝ անշարժ ու գնդաձեւ: Իր երկու նշանաւոր աշակերտները եղած են՝ *Զենոն Էլեացի*ն, որ իր փիլիսոփայութիւնը շարունակողն է եւ *Լեկիպոսը*, որ հիմնադիրն է՝ հիլեական (ատոմական) փիլիսոփայութեան: